

ՏԱԿԱԿԻՆ ՊԻՏԻ ՔԱՆԵՆՔ ...

Posted on June 9, 2010 by Keghart



Category: [Opinions](#)



✘ Հեղինակ՝ Հրայր Ճեպեճեան, Ազդակ, 9 Յունիս 2010

✘ Կիպրահայ իրականութեան մէջ ապրող երիտասարդներ 23 ապրիլին հաւաքուած էին Նիկոսիոյ կեդրոնական Էլեֆթերիա հրապարակը՝ քայլարշաւով անցնելու համար քաղաքի տարբեր փողոցներէն եւ հասնելու Արմենիաս պողոտայ: Անոնք կու գային տարբեր ընտանիքներէ ու կը յաճախէին տարբեր վարժարաններ: Մտահոգ ալ չէին, թէ քաղաքական կամ կուսակցական ինչպիսի՛ հակում ունէին կամ եկեղեցական ու համայնքային ի՛նչ պատկանելիութեան տէր էին: Անոնց մտահոգութիւնը մէկ էր ու առաջնահերթ՝ ոգեկոչել Հայոց ցեղասպանութեան 95-ամեակը, նաեւ՝ համայն աշխարհին յիշեցնել ճշմարտութեան եւ արդարութեան հայկական պահանջատիրութիւնը:

✘ Հեղինակ՝ Հրայր Ճեպեճեան, Ազդակ, 9 Յունիս 2010

✘ Կիպրահայ իրականութեան մէջ ապրող երիտասարդներ 23 ապրիլին հաւաքուած էին Նիկոսիոյ կեդրոնական Էլեֆթերիա հրապարակը՝ քայլարշաւով անցնելու համար քաղաքի տարբեր փողոցներէն եւ հասնելու Արմենիաս պողոտայ: Անոնք կու գային տարբեր ընտանիքներէ ու կը յաճախէին տարբեր վարժարաններ: Մտահոգ ալ չէին, թէ քաղաքական կամ կուսակցական ինչպիսի՛ հակում ունէին կամ եկեղեցական ու համայնքային ի՛նչ պատկանելիութեան տէր էին: Անոնց մտահոգութիւնը մէկ էր ու առաջնահերթ՝ ոգեկոչել Հայոց ցեղասպանութեան 95-ամեակը, նաեւ՝ համայն աշխարհին յիշեցնել ճշմարտութեան եւ արդարութեան հայկական պահանջատիրութիւնը:

Երիտասարդներ էին անոնք՝ իրենց յատուկ խանդավառութեամբ եւ ուժականութեամբ: Կ՛ուզէին քալել ո՛չ թէ զուարճանալու կամ զբօսնելու համար, այլ՝ ոգեկոչելու մէկուկէս միլիոն հայ նահատակներու յիշատակը եւ յարգելու զայն: Աւելի՛ն. անոնք յարգանքին կը միացնէին իրենց պահանջատիրութիւնը եւ իրենց ‘աղմուկ’ով կը լեցնէին Նիկոսիոյ փողոցները: ‘Հայու աչքեր’ ունեցող երիտասարդներուն դէմքին վրայ կ’երեւէր զոհուածներուն նկատմամբ կարեկցանք եւ գուրբ, նաեւ՝ ճշմարտութեան բացայայտման եւ իրաւունքներու վերատիրացման պահանջ: Թէեւ անոնք չորրորդ կամ հինգերորդ սերունդն էին Ցեղասպանութեան վերապրողներուն, սակայն անոնք տակաւին կառչած էին իրենց ինքնութեան:

Անոնց ձեռքին կար կիպրական դրօշակը, նաեւ՝ հայկականը, ինչպէս նաեւ՝ Եւրոպական Միութեան դրօշը: Անոնք հայկական ցաւին վրայ կ՛ուզէին աւելցնել կիպրական ցաւն ալ: Ի վերջոյ, Կիպրոսն ալ կ՛ապրի ցաւը մահուան ու անհետացման, նաեւ՝ պահանջատիրութիւնն ու վերամիացումը: Նոյնն է պարագան հայկականին:

Արդեօք պատմութի՞ւնն էր, որ կը քալէր երիտասարդներուն հետ: Այո՛, բայց այդ նոյն պատմութեան ուժը կը լեցնէր անոնց միտքն ու սիրտը՝ զանոնք մղելով իւրաքանչիւր քայլափոխի կազմելու խիտ ու հաստատուն շարք մը, որ պիտի լեցնէր Նիկոսիոյ

փողոցները:

Երիտասարդներուն թիւն ալ Էական չէր այս պարագային: Անոնց ներքին զօրութիւնը այնքան ուժական էր, որ անոնք անտարբեր էին իրենց փոքրաթիւ ըլլալուն, որովհետեւ կար վճռակամութիւնը՝ քալելու ճշմարտութեան եւ արդարութեան համար, ուր թիւը ա՛լ այդքան ալ կարեւոր չէ:

Երիտասարդական քայլարշաւը քիչ ետք հասաւ մինչեւ Արմենիաս պողոտայ՝ ‘Մելգոնեան’ կրթական համալիրի հանդիպակաց մասը: Հոն անոնց կը սպասէին աւելի ‘տարեց’ները: Անոնք միացան իրարու եւ միախառնուեցան երիտասարդ ուժն ու տարեց միտքը: Միացան եւ խառնուեցան նաեւ ծայրը, աղմուկը եւ պահանջատիրութիւնը: Կար միայն մէկ ձայն, որ կը լեցներ պողոտան, կիպրահայութեան ձայնն էր այդ: Կիպրահայութիւնը՝ իր ամբողջական ու ընդհանրական միաւորներով: Եւ այդ համապարփակ զանգուածին կանչը կը բացայայտեր գաղութին վճռակամութիւնը՝ նայելու եւ քալելու դէպի ապագայ: Եթէ տեղի ունեցածը մէկ կողմէ պատմութեան վկայակոչումն էր, սակայն կար նաեւ ներկայ օրերու իսկական քայլարշաւը, որուն ընթացքին իւրաքանչիւր հայու սրտին տրոփիւնը կը միանար՝ դառնալով մէկ ու վճռական: Այս միութեան ընդմէջէն նախաձեռնութիւնը կազմակերպելու քայլարշաւ մը՝ անկախ թիւէն, որովհետեւ խորքն էր կարեւորը՝ կառչիլ Ս. Գրային ճշմարտութեան. ‘Ձեր տեղը կանգնեցէք՝ մէջքերնիդ ճշմարտութեամբ ամրացնելով ու արդարութեան զրահը կրելով’:

Ապրիլ 24, Պէյրութ: Անթիլիասի մայրավանքէն մինչեւ Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտ լիբանանահայութիւնը քալեց իր երիտասարդներով ու տարեցներով: Քալեց իր բոլոր միաւորներով՝ անկախ քաղաքական, կուսակցական, եկեղեցական, համայնքային, ընտանեկան կամ գաղափարական տարբերութիւններէն: Լիբանանահայն ալ քալեց նոյն համոզումով ու վճռակամութեամբ, որովհետեւ հաւատաց ու կը հաւատայ ճշմարտութեան եւ արդարութեան բացայայտման:

Ու քալեց հայը սփիւռքի տարբեր գաղութներու մէջ՝ մինչեւ մայր հայրենիք: Քալեց միասին, աշխարհով մէկ, ապրելով ու վկայակոչելով պատմութիւն, հաստատելով անոր վաւերականութիւնը, բայց նաեւ՝ փաստացիութիւնը: Եթէ քալեցինք ապրիլ 23-ին եւ 24-ին հոն ու հոն եւ ամէն տեղ, բայց այս բոլորին մէջ եւ բոլորին մօտ կայ մէկ ու յստակ իրականութիւն մը, թէ պիտի քալենք տակաւին ո՛չ միայն իբրեւ ֆիզիքական ներկայութիւն, այլ անպայմանօրէն՝ իբրեւ ժառանգորդները, աշխատանքը շարունակողները եւ պահանջատերները մեր դատին:

Որովհետեւ հաւատացած ենք մեր առաքելութեան, ուրեմն զայն պետք է նկատենք առաջնահերթ ու համազգային աշխատանքային օրակարգի հիմնական կետ: Պիտի քալենք պահելով համազգային ոգին, բայց անպայմանօրէն միտքը, կորովը եւ ուժականութիւնը՝ յար եւ նման ապրիլ 23-ի եւ 24-ի օրերուն: Այս տրամադրութիւնը

պիտի վերածենք շարունակական ու մնայուն ներկայութեան՝ միշտ շարունակելով քալել, շարունակելով երթը՝ նոյն տեսլականով ու նպատակով:

Հայոց ցեղասպանութեան 95-ամեակին նուիրուած ձեռնարկներուն եւ միջոցառումներուն ընդմէջէն հայը կրցաւ զօրակոչի ենթարկել իր հաւաքական ուժը ամէն տեղ՝ անկախ թուային պատկերէն ու մարդուժի կարողականութենէն: Բայց անհրաժեշտ է այս զօրակոչը մնայունի վերածել՝ նոյն տրամադրութեամբ եւ բովանդակութեամբ, նաեւ՝ ապրիլ 23-էն եւ 24-էն ետք ու առաջ, ամէն օր ու ամէն տեղ, որպէսզի անհկա մնայ իբրեւ համահայկական մնայուն տեսլական:

Տակաւին շատ գործ կայ ընելիք: Ասիկա կը նշանակէ, որ տակաւին պիտի քալենք: Պիտի քալենք ապրիլեան օրերէն անկախ, նաեւ՝ տարուան բոլոր ամիսներուն:

Բայց կայ նաեւ ինքզինք պարտադրող հարցումը՝ ի՞նչ ոգիով ու միտքով պիտի քալենք:

Պատասխանը մէկ է ու հաստատ. պիտի քալենք ու շարունակենք երթը ապրիլեան օրերու ստեղծած հաւաքական զօրակոչի տրամադրութեամբ ու միշտ քալելու վճռակամութեամբ:

